

Նա, առանց ամաչելու, կուրծքով, պարանոցի տակ ժամանակ, մտնեց «Тифлисский Листок» լրագրի խմբագրի, յարգելի իւր. Գ. խաչատրեանին և ետեւից, զօղունի կերպով, խից նրան այն ժամանակ, երբ նա հանդիստ իր համար խօսում էր, և չամաչելով իր այդ վայրենի վարմունքից, դեռ միւս օրը սկսեց պարծենալ իր թերթում, ապելով այն կատարական լիարժեք լինելը թէ «թերթի խմբագրի խից և սկսեց բեկեղեր սրելը»։ Ներկայ եղող հասարակութիւնը, ի հարկէ, զգուհեղով երես դարձրեց այդ վարմունքի հետեւից, և քիչ անցած՝ Սպանդարեանին վռնդեցին կուրծքից։

Սպանդար Սպանդարեանի դաժնիքները հանգիստ չը տուեցին նրա արժանաւոր հետեւողին, «Արձագանքի» աշխատակից Սիմէօն Հախումեանին, որը, իր աշխատակիցները կատարելապէս լրացնելու համար, թատրօնի մէջ, ներկայացման միջոցին, մօտեցաւ իւր Սպանդարեանին և ետեւից, զօղունի կերպով խից նրան, ու փոխանակ դեպքեր մտնելու այն զգուհեղ ատաղ, որը արտաբայութեամբ է թէ մամուլը և թէ հասարակութիւնը, և իսկ Սպանդարեան, սկսել է նոյն իսկ խորխորալ...

Ահա հայոց մամուլի երկու փողոցային թերթերը միմեկից ներկայացուցիչները։ Սպանդար Սպանդարեան, փոխանակ պատասխանելու «Тифлисский Листок»-ի հարցին, ետեւից ձեռք բարձրացրեց այդ լրագրի խմբագրի վրա, իսկ Սիմէօն Հախումեան, փոխանակ ժամուկ միջոցով պաշտպանելու՝ զիմեց նոյն միջոցին, ետեւից մօտենալով իր հակառակորդին, մի միջոց, որին զիմեմ են միայն զօղեցրել...

Մենք ընդունում ենք, որ նոյն իսկ Սպանդար Սպանդարեան և Սիմէօն Հախումեան կարող են խօսել պատիւի մասին և պաշտպանել իրանց պատիւը, — բայց դրա համար հարկաւոր է մի փոքրիկ աստիճանական — զիմեմ հակառակորդին ուղղակի կերպով, երես առ երես, բացատրութեամբ, նախազգուշացնելով։ Եթէ Պետերբուրգի ամբողջ մամուլը վրդովւած է, որ մարդիկ իրանց թոյլ են տալիս ձեռք բարձրացնել մամուլի ներկայացուցիչներին վրա, թէ և այդ մարդիկ մասնաւոր մարդիկ են և նոյն իսկ այդ քայլը անում են բացարձակ, ուղղակի, — ինչ պիտի ասի նոյն ուսումնական այն զէպքերի մասին, երբ սկսեցին անողները նոյն իսկ մամուլի ներկայացուցիչներ են, և այն էլ ամենատարբեր եղանակով, ետեւից յարձակւելով։ Այո, այդպիսի փաստեր տեսնելով՝ ուսուցչական իրաւունք ունի ասելու, «Ամօթ՝ այն մամուլին, որի մէջ այդպիսի անձինք անդ ունենաւ ամօթ՝ այն մարդկանց, որոնք այդպիսիների հետ որ և է կապ ունենաւ»։

ՄԱՄՈՒԼԻ ԿԱՐԾԻՔԸ

«Тифлисский Листок» լրագրի աշխատակից Գէորգեան, որ աշխատեց և է եղել ապրիլի 9-ի զէպքին, ահա թէ ինչպէս է նկարագրում զէպքը և ինչ կարծիք է յայտնում այդ լրագրի մէջ։ «Պատմեմ փաստը այնպէս ինչպէս ես տեսայ, ինչպէս նա կատարվեց իմ աչքի առջև։ Երբորդ և չորրորդ զործողութիւնների անտարկտի ժամանակ, թատրոնի բուֆետում, հասարակութեան

ընդհանրութեան մէջ, որը ազատ էր անկողնի տակից, և մի փոքրիկ զլխավազար Բացի այդ եկամտից պետական պարտքի տոկոսներ վճարման են ծառայում նաև մեծազոյն մասն այն հարկերի, որ տեղի թերթը ստանում է կողմից, և ինչպէս իր խմբագրի խից նրան, որը արժանաւոր էր դեռ այն ժամանակ բաւական ընդլայնում, իսկ այնուհետև թէ պարտքն է աւելացած և թէ ուրիշ տուրքեր են գրաւ են զրկւած իրեն երաշխաւորութիւն։ Միւս կողմից կառավարութեան անմիջական անօրինութեան տակ զանազան հարկերն էլ հետզհետեւ նուազում են, երկրի արդիւնաբերութեան չարունակ ընկնելովը, և այս անտանելի կացութիւնը ճիւղալի նման ճնշում է թիրք պետական մարդկանց վրա, որոնք ժողով ժողովի վրա են սարքում, խորհրդածում, միջոցներ որոնում, բայց ոչ մի զործնական հնարք, ոչ մի իրական եղբ չեն կարողանում գտնել»)։

*) Կ. Պոլսում մեզ պատմում էին մի շատ զուարճալի զէպք, որ խիտ լաւ պատկերացում է իրենի վրեժակը և միանգամայն թիրք ֆինանսիստների զարգացման աստիճանը։ Մի անգամ, մամուլում

բաւական ստուար բազմութեան մէջ, որը ազատ տեղ էր թողել զոնից զէպի բուֆետը, քայլում էր կատարելապէս հանգիստ կերպով և ոչինչ չը կատարելով, մի մարդ, իսկ նրան հետեւում է մէկ ուրիշ մարդ և թողնելով նրան առաջ անցնել, մօտ է վազում և ոյժով հարուածում է զլիւսի վերին մասին։

Ենթադրեմք այդ հարուածից, նա առաջին վայրկեանում չիթիվեց, բայց յետոյ, երեի հանկուտում, որ մի ինչ որ անսովոր բան պատահեց, չը կարողանալով սանձադարել իրան, յարձակվեց իրան վերադարձնել վրա և հէնց այդտեղ, ներկայ եղողների աչքի առջև, տեղի ունեցաւ մի վերին աստիճանի զգուհեղ տեսարան, անարժան քիչ թէ շատ օրինաւոր, կուրծքական մարդկանց համար։ Կուրծքներին բաժանեցին, բայց այդ զէպքը զբաւում չը վերջացաւ։ Օղի մէջ մի ինչ որ վատ բան էր զգացվում, ամենքը ուղղում էին խօսել իրանց կարծիքը յայտնել, հասարակութիւնը խմբերի բաժանվեց, չարունակելով քննել պատահած զէպքը, և հետեւեալ անտարկտիստներ, լսվում էին առանձին պախարակիչ նախադասութիւններ և խօսքեր այն անձի հասցէին, որը առաջինը առիթ տուեց այդ անախիւս և կոպտի ընդհարման։

Սակայն բացի նրանից, որ անպայտ մարդու վարմունքը թատրոնում զգուհեղ և անվայել է, բացի նրանից, որ մի այդպիսի քաջադրժութեան համար նա կարող էր մէկ ուրիշ տեղ ընտրել, և ոչ թէ թատրոնը, ուր մարդիկ դալիս են հանգստանալու, զուարճանալու և ստանալու խելացի զուարճութիւն, — ինչ համար այդ ինչիցէնտը խորին հասարակական նշանակութիւն ունի։

— Եթէ է այդ անպայտ մարդը։ Դա զբաւանաւորէ է։ Դա զրիչ մարդ է, տեղական լրագրի աշխատակից Գ. Հախումեան։

Ում վրա բարձրացրեց նա իր ձեռքը, ում վրա մի քանի անգամ իր ձեռքը դրեց, որը համարձակ է բացարձակ այն մարդու առաջ, որին նա, արդարացի կամ անարդարացի, իր թշնամին էր համարում։

Դա նոյնպէս զբաւանաւորէ է, նոյնպէս զրիչ մարդ է, — տեղական մի ուրիշ լրագրի «Մշակի» աշխատակից, Գ. Մալումեան։

Ահա հէնց դրա մէջն եմ տեսնում խորին հասարակական նշանակութիւն այն բանի, որ տեղի ունեցաւ բազմաթիւ հասարակութեան աչքի առջև թատրոնում, ապրիլի 9-ին։

Իրարեւելի աշխատակիցը, մի մարդ, որ հասարակութեանը մօրալ, բարոյականութիւնը, դադարաբանութիւն է քարոզում, որը դատապարտում է արդարացի կերպով խաչատրեանի մեծ ինչ, որ անմաքուր է, անաղիւս է, զգուհեղ է, մի մարդ, որը ղեկավարում է, և պարտաւոր է ղեկավարել հասարակական կարծիքը, որը կանգնած է և ուղեւոր է կանգնած լինի անաղիւս բարձր, սովորական հասարակութիւններից և փողոցային բարոյականութիւնից վեր, որը պաշտպանութեան մի այնպիսի զօրեղ զէպք է միջոց ունի, ինչպէս կենդանի և ճշմարիտ խօսքը մամուլի մէջ, — թէ մի այդպիսի մարդ այն աստիճան ինքնառաւելութեան մէջ է ընկնում, որ չը խնայելով քաղաքավարութիւնը, պատիւը, յարգանքը զէպի

Չնքռ ուղում ծանրանալ այստեղ թէ ինչն է իսկապէս պատճառ ֆինանսական այդ սոսկալի անկման։ Թիրքից առաջ արդիւնաբերող ժողովուրդը բրիտանականներն են, հայերը և յոյները, որոնք և լցնում են պետութեան գանձարանը։ Թիրքի աշխատանքի մասը, թէ իր բերքութեամբ և թէ բազմամարդութեամբ փոքր-Ասիան է, ուր զիւրապան փողովուրդը աւելի հայն է կազմում, քան յոյնը։ Ոչ թիրք պաշտօնականները և ոչ քրդերը չեն կարողանում հանդուրժել, որ իրանց ջուրը վէ մէնս ուր մի քանի քանի (արձակված այսինքն նախկին և ներկայ միլիտանտներ) մի մեծ ժողովում, որ եկամտական վիճակը բարելաւելու համար հնարքներն էին մտածում, մի ծեր և փորձված փաշա տառն է, շինչ էր այդքան խորունկ մտածում, եւ ձեռք մի լաւ առաջարկութիւն անեմ, որով մի մեծ հասոյթ կը զգայնալ գանձարանի համար։ Մենք մի կամուրջ ունենք՝ Վալախայի և Ստամբուլի մէջ, որ տարեկան զուտ հասոյթ է բերում մեզ պաշտօն հարաւ օսկի (մօտ 100,000), չինեք այդպէս 10 կամուրջ և մենք ահա տարան անգամ աւելի եկամուտ կունենանք... Կարծեմ ինչոք փաշայի առաջարկութիւնը չէ ընդունվում ժողովից, որովհետեւ Վալախայի և Ստամբուլի մէջ մինչև հիմա էլ մի կամուրջ միայն կայ...

հասարակութիւնը և արձամարհելով սկզբունքները և հանրակեցութեան ամենատարրական կանոնները, հասնում է իր բարոյական սանձարձակութիւնը այն աստիճան մոռացութեան, և այն աստիճան կորցնում է վայելչութեան զգացմունքը, որ զործ ու վրաւորում է իր նման մի ուրիշ մարդու, այդպիսի մի մարդ ոչ մի իրաւունք չունի արդարանալու, ոչ մի իրաւունք չունի ներողամտութեան, իսկ նրա վարմունքին — չը կայ անուն։

Եւ ճիշդ չը գիտեմ, թէ ինչն է առիթ տուել Գ. Հախումեանին իր ձեռքով դատաստան անել, բայց գիտեմ մէկ բան, որ, յամենայն դէպս, այդ առիթը տեղի ունէր մի քանի օր առաջ։

Այդպիսով չէ կարելի մինչև անգամ թոյլ տալ աֆֆէկտի, վայրկեանի աղղեցութեան եկիթաբութիւնը, երբ մարդը ընդունալ է կորցնելու իրան զիմադրելու ոյժը, կամքը և գիտակցութիւնը։

Պ. Հախումեանը ուրիշ բազմաթիւ, անհամեմատ աւելի արժանաւոր միջոցների թուում մէկ միջոց ունէր, և ամենաաղիւս միջոցը, որը կատարելապէս համապատասխանում էր հէնց իր գրութեանը, և այն մարդու գրութեանը, որին նա համարձակվեց խիւլ։ — Դա ընկերական դատարանին դիմելն էր, որի կարծիքը, կարծես թէ պէտք է Գ. Հախումեան յարգէր և որին կատարեալ վստահութեամբ վերադարձրէր։ Այնպիսին և անկասկած է, որ Գ. Հախումեանը ինքը չէ յարգում իր գրական գործունեութիւնը, և այդ պատճառով չէ յարգում այդ բանը ուրիշների մօտ...

ՆԱՄԱԿ ՕԴԵՍՍԻՑԻՑ

Ապրիլի 5-ին Կ. Պոլսից, սուլթանի հիւրասիրութիւնը 19 օր վայելելուց յետոյ, երէկ առաւօտեան «Սմանիէ» զբօսանաւով այստեղ հասաւ բօլշակական իշխան Ֆերդինանդը։ Նրան ուղեկցում էին միլիտար-նախագահ՝ Ստոյկով, զինուորական մինիստր Պետրով, իսկ Կ. Պոլսից մի քանի թիրք բարձրաստիճան փաշաներ։ Ընդունելութեան համար նախաճաշեցին ինչ և կէտ այստեղի զօրքերի ընդհանուր հրամանատար գեներալ-ադիւտանտ Մուսին-Պաշկին, քաղաքապետ Զեքեանի, խեղճեան նախագահներ, քաղաքապետ Լիւդին ու բոլոր պետական ու հասարակական բարձր հաստատութիւնների կառավարիչները իրանց օգնականները։ Նշանակված էին պատուաւոր պահապաններ մի վաշտ զօրքի հետ։ Հաւաքվել էր և մեծ քանակութեամբ հասարակութիւն։

Երբ նաւը կամաց կամաց մօտենում էր նաւահանգստին, իշխանին ուղեկցող թիրքաց զինուորական մուզիկան հնչեցրեց ուսուսկան օրհներգը։ Իշխանը, որ այդ ժամանակ, յետեւում նաւի կողքին, գիտում էր կանգնած հասարակութիւնը, տուեց զինուորական պատիւ։ Մի փոքր անցնելուց յետոյ կրկնվեց օրհներգը, որին այս անգամ աւելի արձագանք տուեց ուսուսց օրկեստրը բօլշակական աղջկային օրհներգով։ — Եւ մի Մարիցա։ Երբ նաւը կանգ առաւ ափի մօտ, իշխանը իջաւ նաւանից, որտեղ շտապեցին ներկայանալու բոլոր բարձրաստիճան պաշտօնականները։ Քաղաքապետ Լիւդին մի երկու խօսք ուղղելով

զրացի քրիստոնեաները՝ չնորհիւ իրանց աշխատասիրութեան, խնայողութեան և առեւտրական հմտութեան հարստութիւն զիւրին և թէ իրանցից աւելի հարկ տան, նրանց կշտացնեն և թէ միանգամայն առաջադիւն են։ Եւ վերջին զէպքերից նրանք օգուտ քաղեցին՝ կողմիցներու համար քրիստոնեաներին, բուրձնիկամբ առնելու համար այն, ինչ որ իրանք սեփական աշխատութեամբ չէին կարող ձեռք բերել։ Չլատելով և ոչնչացնելով երկրի ամենալաւ արդիւնաբերող և զօրեղ ոյժը, նրանք ինքնասպանութեան պատճառ դարձան իրանց աշխատեան համար։ Այնուհետև որ աղետ մրցումներ, համանման ջանք ու եռանդով կարելի չեղաւ քրիստոնեայ տարրի աւելի կողմ ոյժը, վայրենական արարմունքը լիովին կատարեցին իրանց գործը...

Խօսելով զարձակ 20 տարի առաջվայ ժամանակի վրա, հարկ եմ համարում յիշատակել մի եւրօպական դեսպանի գրածը՝ այսօրվանի մի պարագայի առիթով։ Երբ, 20 տարի առաջ, մի ուրիշ քրիստոնեայ նահանգ, այն է Բօլշակ, նա, որ այժմ իր կատարեալ յաղթանակն է տօ-

իշխանին, աղ ու հաց մատուցեց։ Արծաթեայ մատուցարանի վրա գրած էր. «Նորին արքայական մեծութիւն բօլշակական իշխանին Օղէսա քաղաքից։ Յետոյ, ներկայացնելով մի այբօմ, խօսեց այստեղի բօլշակական վանահայրութեան գլխաւորը, Պապուզով, և վերջապէս հետեւեալ բացականչութիւնով. «Կեցցէ Բօլշակայի գլխաւոր Հովանաւորը, Ռուսաց մեծ Յարը, իշխանը ու նրա ժառանգը»։ Ի պատասխան իշխանը քաղաքավարաբար չնորհալուով յայտնեց իրանցից տուած պատիւ համար, աւելացնելով, որ «ճիշդ է, Ռուսաստանը մեզ շատ բարեք է արել։ Խօսեց նաև այստեղի պաշտօնական ընկերութեան ճիւղի նախագահը։

Ընդունելութիւնները վերջացնելուց յետոյ, իշխանը իջաւ ցամաք։ Օղ թնդաց «ուրա-ու», իշխան Ֆերդինանդ բարձրաստակ, վայելչակալով ու գեղեցկատես է։ Դեմքը խիտ ինտելիգենտ ու զիւրեկան արտայայտութիւն ունի, փախը նրանից չէ բաժանվում։

Հեռագրից արդէն զիտեք, որ իշխանը այստեղից ճանապարհ ընկաւ Պետերբուրգ։

ՆԱՄԱԿ ԳԱՅՍԱԿԻՑ

Ապրիլի 12-ին, տեղի ունեցաւ Գանձակում քաղաքագլխի և ուսուցիչի երկու անդամի և զուտայի քարտուղարի ընտրութիւնը։ Քաղաքագլուխ ընտրվեց Կօնօվիցի, որը ստացաւ 31 սպիտակ և 28 սև ջուէ։ Իսկ ուսուցիչի անդամներ ընտրվեցին Կոստանդին Սօլօմոնի 36-րակեան, որ ստացաւ 37 սպիտակ և 23 սև ջուէ, և Վահրաման Սերգէյի 30-րակեան, որ ստացաւ 32 սպիտակ և 27 սև ջուէ։ Իսկ քարտուղար՝ Սերգէյ Եակովլևիչ Խօջայեան։

Քաղաքագլխի ուժիկ նշանակված է տարեկան 3000 ռ., ուսուցիչի իւրաքանչիւր անդամին՝ 1200 ռ. և քարտուղարին 1000 ռ.։

ՆԱՄԱԿ ՄԵՐՎԻՑ

Ապրիլի 8-ին Մերվը ընդհանուր սարափի մէջ էր։ Բոլորը լարված, տենդային դրութեան մէջ սպասում էին չարադուշակ թնդանօթի ձայնին, որը պէտք է գուժէր վտանգի մօտ լինելը։ Հարուստ խանութպանները այդ օրը, չնայն բացառութեամբ, իրանց խանութները կողմած, մի ապահով տեղ էին որոնում։ Ումանք ընտանիքը և արժէքաւոր իրերը փոխադրել էին Ասխաբաթ և Բայրամ Ալի, իսկ մեծամասնութիւնը «Կրեպոտ» կոչված արտաբերման Նոյն իսկ գետի մօտ զօրանոցների իրենք էլ էին փոխադրել աւելի ապահով տեղ։ Հարիւրաւոր զինուորներ աշխատում էին անխնայ կերպով։ Այդ բոլորի վրա աւելացրէք տառնեակ հեծեալ զինուորականներ, որոնք անընդհատ ձիերը սրբալաւ քշում էին այս ու այն կողմը, կարծես թէ թըշնամում բանակը մօտեցած լինէր արդէն, — և գուցէ մօտաւոր զաղափար կազմէր թէ ինչ իրաւանցման մէջ էր քաղաքը։

Նուր իր նախկին գահճի գրկում, նոյնպէս մատնված էր կրակի և սրածուրութեան և արեան մէջ թաւալված, Կ. Պոլսի այն ժամանակի Փրանսապան դեսպանը գրում էր իր միլիտարին Պարիզ. «Եւրօպական քրիստոնեաները, չնորհիւ իրանց աշխատասիրութեան և բարոյականութեան, և չը նայելով նրանց զէմ ցոյց արված բազմաթիւ թշնամութիւններին, չարունակ առաջ էին դնում թէ հարստութեամբ և թէ կրթութեամբ և հետեւաբար աւելի զօրանում, քան մահ մեռականները։ Ահա այս՝ այնչափ ընտանի և այնչափ օրինաւոր առաջադիւն մուլթիւնն է, որ օսմանեան հայրենասիրները ուղղում են ջնջել, հրդեհ են երկ և կոտորած են երկ միջոցով...» (Ֆրանսիական «Կրեպո» զիւրք 1875—76)։

Այսպէս էր դատում ծանօթ զէպքերի մասին, ֆրանսիական գիւսնադատութիւնը, 20 տարի առաջ։ Որչափ փոխված են այնուհետեւ պարագաները, որչափ կերպարանափոխված իրերի դրութիւնը և զիւրօմատիական խաղը...

Այնպես

Ինչ է պատահել, անշուշտ կը հարցնէ ընթերցողը, արդէն համբերութիւնից դուրս եկած: Ահա թէ ինչ: Հինգշաբթի օրը, ապրիլի 4-ին, հեռագիրը գտնուեց թէ՛ «Մուրգա» գետը շատ բարձրացել է, և Մերվին վտանգ է սպառնում: Այդ լուրը իսկոյն կայծակի արագութեամբ տարածուեց քաղաքի մէջ. սակայն այնքան էլ ուշադրութիւն չը գրաւեց թէ իշխանութեան և թէ հասարակութեան կողմից: Բայց դա դեռ սկիզբն էր: Հետեւեալ օրը, ապրիլի 5-ին, երեկոյեան դէմ, հեռագիրը կրկին գտնուեց, թէ ջուրը մօտաւորապէս 7 արշին բարձրացել է, և Մերվին անխուսափելի վտանգ է սպառնում: Դրանից յետոյ իշխանութիւնը իրարանցման մէջ ընկաւ. հետեւեալ օրը, ապրիլի 6-ին, Մերվի ճգնաժամն էր համարվում: Փախչող փախչողի ետեկից: Մօտ հազար ժարդ անդադար աշխատում էին, գետի ուղղութեամբ, երկու կողմից պատնէշ կանգնեցնել և խրամ փորել: Վտանգը աւելի մեծացաւ, երկուշաբթի, ապրիլի 8-ին, առաւօտեան 8 ժամին, հեռագիրը գտնուեց թէ «Մուրգա-բան» մի մասը պատռւել է և կրկին սաժեն ու կէս ջուր է աւելացել: Ամեն տեղ խրամ են փորում, և պատնէշ են կանգնեցնում, քաղաքը կարծես պարալիզուած լինի: Այս րօպէին, երբ փակում ենք այս նամակը, ժամ առ ժամ սպասում ենք վտանգին:

Հ. Մ.

ՆԱՄԱԿ ՆԵՐՔԻՆ-ԱՌՏՈՅԻՑ

Ապրիլի 12-ին

Երէկ, ամսիս 11-ին, ժամի 3-ին, այստեղ հասաւ մեր նոր նահանգապետ կոմս Տիգրանուզէն: Փոստային կայարանի հանգէպ, որ իջեանեց, խոնված էին չըջականիւրից հայ, ուռն և թուրք հասարակութիւնների ներկայացուցիչներ, որոնք «այդ ու հայ» մատուցին աւ. նահանգապետին, որը 10 րօպէից յետոյ շարունակեց իր ճանապարհը դէպի իր նոր պաշտօնատեղին, Երևան: Նրան ուղեկցում էին գիւղական ձիաւորներ, իսկ գիւղը կարգարկած էր զբօսայիւրոյն:

Կոմս Տիգրանուզէն արդէն ծանօթ է տեղական ժողովրդին այն ժամանակից, երբ նա 3—4 տարի առաջ փոխ-նահանգապետի պաշտօն էր վարում Երևանում: Նա ժողովրդական մարդ է: Մենք անձամբ լսել ենք նրա հարց ու փորձը գիւղական ժողովրդին, երբ տեղեկութիւններ էր պահանջում ժողովրդի կեցութեան, աղքատի, պարտավորների և արդիւնաբերութեան մասին, և միշտ խրախուսում էր գիւղական ժողովրդին: Այդ տեսակետից՝ ուրախ լինի տեղական ժողովուրդը, որ այդպիսի մի մատչելի անձնաւորութեան է յանձնված նահանգի կառավարութիւնը: Մեր նոր նահանգապետի մասին աւելի տեղեկութիւն ունենալու համար մեր նահանգի բնակիչները թող կարդան «Մշակի» № 32-ում տպված յօդուածը:

ՆԱՄԱԿ ՍՂՆԱԽԻՑ

Ապրիլի 11-ին

Ապրիլի 7-ին մեր ակումբի մէջ տեղի ունեցաւ քաղաքի ձայնաւորների ընտրութիւնը: 191 ձայն ունեցողներից ներկայ էին միայն 100 հոգի: Ժողովին նախագահեց Ստեփան Տէր-Աւագան:

Ձայների առաւելութեամբ ձայնաւոր ընտրվեցին հետեւեալ անձինք. Ամիրան Դանիէլեան, Ստեփան Տէր-Աւագան, Ալեքսանդր Ամիրխանեան, Մեքէօ Ամիրխանեան, Սիմէոն Օթարեան, Խաչակ Դանիէլեան, Գարուիւն Օթարեան, Մեքէօ Բաշինջաղեան, Խաչակ Ղաջարեան, Նոյն Նազիրով, Լուկա Մօսուով, Գովհաննէս Բաշինջաղեան, Գարուիւն Սարգսեան, Վարդան Նիկողոսեան, Մեքէօ Պատեան, Ալեքսանդր Զօրիկով: Կանգիւղացիներ. Ալեքսանդր Եղորեան, Մեքէօ Խեչումեան, Նիկողայոս Օսանկեան:

Ընտրութիւնների ժամանակ մի քանի թիւրիմացութիւններ են տեղի ունեցել, որոնց առիթով դիմումներ են լինելու նահանգապետին:

Աւելորդ չենք համարում նկատել, որ ձայնաւորների ստաբիլութիւնը պաշտօնի համար պէտք է աչիւ առաջ ունենան բարեխիղճ, քաղաքի շահերին նուիրված մարդ: Այդ պաշտօնի համար, մեր կարծիքով, ամենայնպէս և ամեն-

նահամապատասխանը Նիկողայոս Տէր-Մատթէոսեանն է, որը աւարտել է Լազարեան ճեմարանը և ճանաչված է ինչպէս բարեխիղճ մարդ: Ե.

ՆԱՄԱԿ ՂՈՒԲԱՅԻՑ

Ապրիլի 3-ին

Հրէաները այստեղ կղզիացած են քաղաքի մի կողմում, Ղուբա գետակի հիւսիսային ափում: Ապրում են խիտ. անակները մեծ մասամբ փայտաշէն խրճիթներ են, և իրար վրա կուտակված. մէկի տան կտուրը միւսի տան բնակչի համար արահ է կազմում: Այստեղի հրէաները աղքատ են և յայտնի են իրանց արսալիկի կեղտոտութեամբ. անմաքրութիւնը և դարչանոտութիւնը անպակաս է միշտ հրէայի մարմնից, նրա բնակարանից:

Հրէաները, սակայն, մեծ օգուտներ են տալիս քաղաքին. նրանք պարապում են ձկնորսութեամբ, ալիքործութեամբ, մշակութեամբ, մշտնադաշտում են ծառայի, լուացարարի պաշտօնով, գլխավորապէս կանայք և աղջիկներ: Հրէաներն աղքատ չեն, ինչի տան մէջ, ընտելանում է նրա սովորութիւններին, նրա ու կացին, սովորում է խօսել հայերէն, հաճում է հայի կերպ և չէ կամենում, թէկուզ և հասունացած ժամանակը, հեռանալ հայի տնից: Հրէաները պարապում են նաև վաճառականութեամբ և գիւղատնտեսութեամբ. նրանց պատրաստած իւղը, պանիրը, օղին ոչ ոք այստեղ չէ կարողանում պատրաստել:

Վերջերս գողութեան մէջ նկատվել են երկու հրէաներ, որոնք հաշտարար դատաւորի վճիռով 8 ամսով բանտարկութեան ենթարկվեցին: Պաշտօնութիւնը շատ տարածված է հրէաների մէջ. շատ անգամ վեներական ախտով վարակվում են այստեղի թուրքերը և ուրիշ ազգի երիտասարդները:

Շուտով կուրբի բեմում ունենելու կը խաղան «Завоеванное счастье» պիեսան. մի ներկայացում էլ պիտի տան միաժամանակ վրացիք՝ վրացերէն լեզուով:

Մ. Ս.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են, որ վեհախառ կաթուղի-կօսը կանգնելով մերձէ է Ներսիսեան դպրոցի հողաբարձութեան ծրագիրը՝ դպրոցի համար նոր շէնք կառուցանելու մասին: Վեհախառը յայտնում է իր կանգնում այն միտքը, որ գիտաւորութիւն ունի Ներսիսեան դպրոցը տեղափոխել Սանահին:

Մի շարքից յետոյ Կովկասեան կառավարչապետը ճանապարհ է ընկնելու: Մօսկվա, թագաւորութեան ներկայ լինելու համար:

Պետերբուրգի ազատ-տնտեսական ընկերութիւնը ստացաւ 10.000 ռուբլի նուէր գներեալ Նավրոցկուց՝ երկրագործական ընկերակցութիւններ հիմնելու նպատակով: «Մշակի» անցեալ համարներից մէկում մենք մանրամասն տեղեկութիւններ ենք հաղորդել այդ ընկերակցութիւնների մասին: Դրանք հիմնվում են գիւղերում և նպատակ ունին հաւաքական ոյժով ձեռք բերելու կատարելագործված մեքենաներ և զիւրացնել տնտեսութեան արդիւնքների վաճառումը:

Ապրիլի 9-ի դէպքի առիթով մեր աշխատակից Խ. Մալումեան ստացաւ Երևանից, թեմական դպրոցի տեսուչ Տիգրան Գովհաննիսեանից հետեւեալ հեռագիրը. «Խօսք չեմ գտնում արտա-յայտելու իմ գայրոյթը՝ այն ստոր վարմունքի դէմ, որ պատահեց ձեզ հետ»:

Երէկ, ապրիլի 15-ին, տեղի ունեցաւ հայոց ղեկավարական խմբի յաջորդ կարգապետ Մատինեանի թաղումը: Հանգուցեալը, որ 28 տարի ծառայում էր թիֆլիսի հայոց կոնսիստորիա-յում, 1879 թիւից սկսած հայոց թատրոնի յաջորդի պաշտօն էր կատարում՝ բարեխիղճ աշխատանքի եռանդով: Նա թողել է մեծ ընտանիք, բաղկացած կնոջից և հինգ որդուց՝ առանց որ և է նրեթական միջոցների: Արեւօք կարելի է յուսաւ, որ հայոց կոնսիստորիան որ և է նրեթական նշանակի 28 տարի իրան ծառայողի ըն-

տանիքին: Այդ յուսաւ դժուար է, մնում է, որ ինքը, հայոց խումբը, գէթ մի ներկայացում տայ՝ եկամուտը ամբողջապէս յատկացնելով որը ընտանիքին:

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը այս շաբաթ կը վերջացնի իր առաջարկութիւնները այն միջոցների մասին, որոնցով Թիֆլիսի դուստն պէտք է յաւերժացնի առաջիկայ թագաւորութիւնը: Անցեալ չորեքշաբթի ուղարկւած և յանձնաժողովի խորհրդակցութեամբ որոշվեց քաղաքի աղքատ դասակարգի վրա հաշված հողային հարկի հին աւարտիկներից 20.000 ռուբլի ներել և այդպիսով վերջացնել մի հին հաշիւ, որ թէ՛ ծանրութիւն է պատճառում բնակիչներին և թէ՛ մտաւտանջութիւն քաղաքային ուղարկւածին:

Մեզ հաղորդում են, որ նահանգական իշխա-նութեան կարգադրութեամբ մինչև ներկայ ամսի 20-ը, անկետաձգելի կերպով պէտք է կատարվի Թիֆլիսի արհեստաւորների գլխավոր ընտրութիւնը: Այդ պատճառով Թիֆլիսի արհեստաւորների մէջ մէջ տեղի է ունենում այժմ եռանդուն ազդեցութիւն: «Մշակի» առաջիկայ համարում մենք կաշխատենք մի յօդուած նուիրել այդ հարցին:

Մեր հնորայի երգչուհի օրիորդ Նազին Պապայանի երկրորդ կոնցերտը, որ տեղի ունեցաւ Թիֆլիսի ժողովարանի դահլիճում, զբաւել էր մեծ բազմութիւն: Երկու արիաները՝ «Տրա-վիտա» և «Իդիլիա» օպերաներից՝ օրիորդը երգեց մեծ ձայնով: Երգերից դուրս, bis-երին, օրիորդը մի քանի անգամ երգեց, և ի միջի այ-լոց հայերէն «Հազար երանի»: Վարդ, չորեքշաբթի, ապրիլի 17-ին, օրիորդ Պապայան տա-լու է մի կոնցերտ Հայոց Բարեգործական ընկե-րութեան օգուտին և յետոյ ճանապարհ պէտք է ընկնի Պարիզ:

Լեռնային դեպարտամենտի նախկին ղեկավար Սկալկովսկի բնակութեան հաստատելով Պարիզում, իր վրա է ընդունել Բոտիլլի նախկին գործերի կառավարութիւնը:

Ներկայ ապրիլ ամսի 18 ին և 19 ին բացվում է երկաթուղու երկ ու ր դ գնացքը՝ Բագուի և Թիֆլիսի մէջ:

Նիժնի-Նովոգորոդի ցուցահանդէս յաճախողների համար նշանակված են հետեւեալ գները: Շաբաթվայ լի օրերը մօտքը պէտք է արժենայ 30 կոպէկ, կիրակի օրերը 20 կոպէկ, միայն երկուշաբթի օրերը 1 ռուբլի: Լրագիրների աշխատակիցներին տրված կը լինեն մեծ դիւրութիւններ ցուցահանդէս գնալու և վերադառնալու համար:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Orientalische Politische Correspondenz» լը-րագիրը տեղեկութիւններ է ստացել Կ. Պոլսից, թէ պէտք է չուտով հայոց հարցը նորից սուր կերպարանք ստանայ: Այդ բանը գլուխ բերելու ընդ որ պատրաստութիւնները ծածուկ կերպով կատարվում են յեղափոխական կոմիտեաների ձեռքով և այդ միջոցին հայերը շարունակում են դուրս գալ Անատոլիայից: Ով փող և միջոց ունի ձեռքին, նա թողնում է հայրենիքը և ծաղկաւ կերպով, կեղծ անունով և թղթերով նաւ է նստում և փախչում է Եւրօպա, մանա-կանց Անգլիա և Ֆրանսիա: Բէրլինի լրագիրնե-րը, մատնացոյց անելով այդ յուղիչ լուրերի վրա, այն կարծիք են յայտնում, որ եթէ Ան-գլիան, չը նայելով անցեալ տարվայ դասին, զարձեւաւ սկսի ինտրիգներ լարել Հայաստանում, նա այս անգամ էլ իր նպատակին չի հասնի: Անցեալ տարվայ հայկական իստոյնակութիւննե-րից յետոյ, Եւրօպայում ոչ միայն որ և է նոր բան չէ պատահել, որ կարողանար նպաստել այդ ինտրիգներին աջողութեան, բայց այդ միջոցին Ռուսաստանը միջոցներ է ձեռք առել, նը-րանց լաւ ընդգիմադրելու համար:

Անգլիական «Daily News» լրագիրը մի առաջ նորոգ է նուիրել միախոսողներին Թիւրքիայից վաճառելու խնդրին: Լրագիրը բաւարար չէ հա-

մարում թիւրքաց կառավարութեան տուած բա-ցաբարութիւնը այդ առիթով: Բ. Պոլսը հերքում է, որ նա հրամայել է դուրս վաճառել միախոսար-ներին, սակայն աւելացնում է, որ նա ստիպված կը լինի այդպէս վարվել այն միախոսարների հետ, որոնք նկատված կը լինեն իբրեւ խո-վարարներ և յուղմունք առաջ բերողներ: Լրա-գիրը ասում է, որ այդ նախադասութիւնը շատ առաձգական է և վտանգաւոր, որովհետեւ ով պէտք է որոշի խոսվարար լինելու սահմանը, իրականութեան մէջ խոսվարար ճանաչվել կա-րող են բոլոր այն անձինք, որոնք այս կամ այն պատճառով հաճելի չեն տեղական իշխանու-թեան:

Միախոսարների վերաբերութեամբ անգլիական համայնքների ժողովներում տեղի ունեցան հե-տեւեալ խօսակցութիւնները:

Ստիվ Էնսոն հարցրեց արտաքին գործերի զարտուղարին, թէ ի՞նչ տեղեկութիւններ ունի նա սուլթանի իրադէհի մասին, որ ստորագրված է, բայց դեռ չէ հրատարակված, որի զօրու-թեամբ Թիւրքիան արտաքին է քրիստոնեայ միախոսարներին և խառնվում է նպաստ բաժա-նելու գործի մէջ:

Կ. Բ. Գ. Օ. Ն. պատասխանեց. Մուշի հիւպատոսը հեռագրել էր, որ Թիւրքաց տեղական իշխանու-թիւնները՝ կայսերական իրադէհի համաձայն՝ պա-հանջեցին բոլոր միախոսարներից թողնել Փոքր-Ա-սիա և դուրս գնալ Ալեքսանդրեապոլիսից: Փոքր-Ա-սիայ կերբին այդ մասին առաջարկութիւններ արաւ և պատասխան ստացաւ, որ իրադէհի իմաստը չէ վե-րաբերում յատկապէս միախոսարներին, այլ միայն այն անձանց, որոնք մասնակից են ապստամբական շարժումներին, և որ միախոսարները, քանի չեն խախտել երկրի օրէնքները, չեն ենթարկվի հա-լածանքի: Միացեալ նահանգների ներկայացուց-չին էլ յայտնեցին, որ իրադէհ յետ է կերպված:

ԿԵՐԱԿՆՈՐԵԱՅ ԶՈՒԱՐՃՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՄԲՈՒԻ ՀԱՄԱՐ

Մարտի 10-ին անգլիական պարլամենտը ձայ-ներէր առաւելութեամբ ընդունեց մի որոշում, որ երկու անգամ՝ այն է 1882 և 1891 թվական-ներին՝ մերժվել է պարլամենտից: Այդ որոշու-մով ազգային մեղէնները և գեղարուեստական հանդիսարանները պէտք է բաց լինեն և կիրակի օրերը, սկսած ժամը 2-ից:

Հարցը նրանումն է, որ Անգլիայում վաղուց յարուցված է մի ծանրակշիռ խնդիր ժողովրդի կրթական դուրսնութիւնների մասին և մեծ ջանք-եր են գործադրված ազատելու ժողովուրդը տօն օրերի անբարոյական քէֆերի և անառակութիւն-ներից: Կրթող միակ հիմնարկութիւնը սօսն օրե-րին՝ միայն եկեղեցին էր, որ թէև Անգլիայում կատարում է իր կոչումը բաւարար կերպով, սա-կայն նա չէ դոհացնում ժողովրդի բարոյական բազմատեսակ պահանջները, չէ աւելացնում նրա գիտութեան պաշարը, չէ զարգացնում գեղա-րուեստական ձայակը:

Արդէն 1856 թվին կազմվեց Անգլիայում ազ-գային-կիրակն օր եւ ա ղ ա ղ ն ա կ յ ու թ իւ ռ ն անունով մի հաստատութիւն, որ ձիւղեր բացեց Անգլիայի քաղաքներում և նպատակ դրեց՝ օգ-տվել կիրակի օրերից՝ կրթութիւն տարածել աշ-խատող ժողովրդի մէջ: 1869 թվին կազմվեց կի-րակն օր եւ ա ղ ա ղ ն ա կ յ ու թ իւ ռ ն երկու ըն-կ եր ու թ իւ ռ ն, որի ծրագիրը սահմանափակ-վում է միայն դասախօսութիւններով: Մինչդեռ դասակցութիւնը բացի դասախօսութիւններից կազմում է նուազահանդէսներ, զանազան զբօ-սանքներ, այցելում է գեղարուեստական ցու-ցահանդէսներ, նոյն իսկ մշակում է ժողովրդի կրթութեան վերաբերեալ օրինաքներ և նրանց աջողութեան համար պատրաստում հասարակա-կան կարծիքը: Դասակցութիւնը շատ փալտոն կերպով կարողացել է իրագործել իր ծրագիր-ները: Նա համոզել է հարուստ թանգարաններ ունեցող անձանց, որ նրանք բանան իրանց զեռ-ները դասակցութեան անդամների համար կի-րակի օրերը: Ինչպէս յայտնի է, Ռուստոմիստրի դուքսը ունի գեղարուեստի զանազան ձեւերի վերաբերեալ շատ հազուադիւրս և հարուստ ժո-ղովածուներ: Գուքը նոյնպէս բացեց իր հաւ-դիսարանները ժողովրդի համար: Այդտեղ կարե-լի է տեսնել Բաֆայէլի, Բուքնիսի, Վան-Գիկի, Տիցիանի և ուրիշ նշանաւոր արուեստագէտների անմահ ստեղծագործութիւնները:

Типографія Канцел. Главнотач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.